

### ԿԱՅԱՑԱԲ

### Հ.Յ.Դ. ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 2-ՐԴ «ՀԱՅԱՍՏԱՆԱԳՆԱԳՆՈՒԹԻՒՆԸ»

Հ.Յ.Դ. Բիւրոյի Երիտասարդական գրասենեակի կազմակերպութեամբ թուականիս Յունիսի 18-25-ին տեղի ունեցաւ Հ.Յ.Դ. պատանեկան միութիւնների Համահայկական 2-րդ «Հայաստանագնացութիւնը»:

Համահայկական 2-րդ «Հայաստանագնացութեանը» մասնակցում էին 320 պատանիներ եւ վարիչներ 9 երկրներից՝ Հայաստան, ԱՄՆ, Սիրիա, Լիբանան, Իրան, Կանադա, Յունաստան եւ այլուր:

«Հայաստանագնացության» կարգախօսն էր՝ «Իմ հայրենիքն է իմ ապագան»:

Բացման արարողութիւնը տեղի ունեցաւ Ծիծեռնակաբերդում, ուր նախ բացման խօսքով հանդէս եկան Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ՝ Վահան Հովհաննիսեանը եւ Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն Մարմնի անդամ՝ Իգոր Սարգսեանը, ապա կատարուեցին ազգային-յեղափոխական մեներգեր, որից յետոյ բանակումի անունից ծաղկեպսակ զետեղուեց «Յեղասպանութեան զոհերի» յուշարձանին:

Մասնակիցների համար կեցութեան վայր էր ընտրուել Աղանաձորի Մանկավարժական համալսարանին պատկանող հանգստեան տունը:

Կազմակերպուած միջոցառումների ընթացքում մասնակիցները առիթ ունեցան այցելելու Ս. Էջմիածին, հանդիպել Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ Տ.Տ. Գարեգին Բ-ի հետ եւ ստանալ նրա օրհնութիւնը:

Մասնակիցները առիթ ունեցան այցելելու Սարդարապատի յուշահամալիր, Գառնու տաճար, Գեղարդի ու Կեչառիսի վանական համալիրներ, ՀՀ ՊՆ «Վազգէն Սարգսեանի» անուան ռազմական ինստիտուտ, ինչպէս նաեւ Սեւանայ լիճ:

«Հայաստանագնացութեան» մասնակից պատանիները առիթ ունեցան ունկնդրելու դասախօսութիւններ եւ ունեցան հանդիպումներ կուսակցութեան պատասխանատու ընկերների հետ:

Մշակութային մասով կազմակերպուեց այցելութիւն Հայաստանի ազգային պատկերասրահ եւ պատմութեան թանգարան, Երեւանի «Յաղթանակի» զբօսայգում տեղի ունեցաւ ցուցահանդէս եւ համերգային ծրագիր՝ նուիրուած Արցախեան Ազատամարտի 20 ամեակին: Կեցութեան վայրում, Երեկոյեան ժամերին տեղի ունեցան հաներգային ծրագրեր, մասնակցութեամբ՝ Աղասի Իսախրեանի, Սամուէլ Երանեանի, «Ակունք» ազգային համոյթի:

**Հ.Յ.Դ.**

**ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ**

Թիւ 002  
Թուական՝ 28.ՅՈՒՆԻՍ.2008 Թ.  
2/1

---

Հ.Յ.Դ. Բիւրոյի Երիտասարդական Գրասենեակ

ARF Youth Office

ayf@arf.am

---

Միջոցառման փակմանը խօսքով հանդես եկան պատանիներ տարբեր շրջաններից, «Հայաստանագնացութեան» ընդհանուր պատասխանատուն եւ Հ.Յ.Դ. Բիւրոյի Երիտասարդական Գրասենեակը:

Հ.Յ.Դ. պատանեկան միութիւնների համահայկական 2-րդ «Հայաստանագնացութիւնը» իր դաստիարակչական բովանդակութեամբ ու կարգապահ ընթացքով յաջողեց առաւել ամրացնել մասնակից դաշնակցական պատանիների մէջ գաղափարական ու կազմակերպական ըմբռումները: